Մեզ դիմաւորեց մի ուրիշ բօնզա, որ վերցնելով մեր տոմսակները՝ առաջնորդեց մեզ դէպի միջանցքը, որ մի շրջան էր կազմում, պարփակելով բագը: Միջանցքի մի կողմը մի անընդհատ թղթէ պատ էր, որի ետեւը բագն էր, իսկ արտաքին կողմից անվերջ շարւած էին սենեակները:

Բաց դռնից երեւում էր ամբողջ սենեակը, յատակին մաքուր խսիր, պատերին արագիլներ կամ մի որեւէ սաղարթախիտ ծառ նկարած: Բօնզան կանչում էր ամեն մէկի մուտքի դիմաց եւ սկսում իր հռետորական ձիգ շեշտերով ճապոներէն ճառը, ցոյց տալով սենեակի ներսը:

Այդ ճառը բացատրում էր սենեակի պատմութիւնը. թէ ինչպէս այս մէկը սրբագործւած է միկադօյի այցելութեամբը, միւսում քահանայ էր ձեռնադրւել արքայորդին. երրորդը մի սուրբի խուցն էր եղած եւ այլն: Վերջն էլ պատմում էր երկար, թէ որ արւեստագէտի գործն է այդ սենեակի զարդերն ու նկարները:

Ինձ ընկերակցող ճապոնացիները կռանում, նայում էին ուշի-ուշով խորհրդաւոր սենեակի խորքը եւ երկիւղած լռութիւն էին պահում: Մենք անդադար առաջ էինք շարժւում եւ անվերջ անցնում մէկ սենեակից միւսը: Իմ համբերութիւնս արդէն հատնելու վրա էր. արդէն յոգնել էի այդ դատարկ սենեակների դռների առաջ կատարած մեր անվերջ այցելութիւններից, երբ յանկարծ բագին նայող թղթէ պատի ետեւից ականջիս հասաւ մի ամբողջ խմբերգի ներդաշնակ ու ալիքաւոր ելեւէջը, որ խիստ յիշեցնում էր մեր եկեղեցական երգեցողութիւնը:

Ես հազիւ էի զսպում հետաքրքրութիւնս. ձեռքերս ակամայ դէպի թղթէ պատն էի պարզում մի փոքրիկ ծակ բաց անելու համար: Բայց յանկարծ երգը լռեց, եւ ես շտապեցի բօնզայի ետեւից: